

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025 թվականի նոյեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 11-ը Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում Ճապոնիայի կառավարության և JICA կենտրոնի կողմից կազմակերպված «Խելացի տրանսպորտային համակարգերի քաղաքականություն և ճարտարագիտություն» խորագրով դասընթացին մասնակցության արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արուայակ Խաչատրյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության ծրագրերի վերլուծության և մշտադիտարկման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի սույն թվականի հոկտեմբերի 29-ի 2977-Ա հրամանի համաձայն 2025թ. նոյեմբերի 17-ից հոկտեմբերի 12-ը գործուղվել եմ Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիո:

4. Հրավիրող կողմը.

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (Japan International Cooperation Agency)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Խելացի տրանսպորտային համակարգերի քաղաքականություն և ճարտարագիտություն» խորագրով դասընթացին: Դասընթացի ժամանակ տրված տեղեկատվությունը խիստ արդիական է ՀՀ ընդհանուր օգտագործման ճանապարհներին կիրառելու համար: Խելացի տրանսպորտային համակարգերի օգնությամբ հնարավոր կլինի կրճատել խցանումները ՀՀ խոշոր քաղաքներում, կառավարել թույլատրելի առավելագույն արագությունը կախված ճանապարհային և եղանակային պայմաններից, վարորդներին ճշգրիտ տեղեկատվություն հաղորդել ճանապարհային պայմանների (վթարներ, ճանապարհային աշխատանքներ, սահմանափակ տեսանելիություն, խցանումներ և այլն) մասին:

6. Քննարկված թեմաները.

- Traffic Engineering. հոսքի տեսություն, թողունակություն, հագեցման հոսք, խաչմերուկների վերլուծություն/դիզայն,
- Spatial Information Sciences. GIS, տարածական տվյալների ինտեգրում, տեղորոշման վրա հիմնված վերլուծություն,
- Հավասար մակարդակի խաչմերուկների նախագծում և լուսացուցային կառավարում (signal control). փուլավորում, հետիոտնային անվտանգություն, անվտանգության միջոցներ,
- Խցանումների նվազեցում և երթևեկության անվտանգության միջոցառումներ ITS-ով,
- Ֆինանսավորում և մասնավոր կապիտալ (PPP, ռիսկերի բաշխում)
- Global ITS Trends. ադապտիվ լուսացուցային կառավարում, AI անալիտիկա, տվյալահեն համակարգեր,
- ՃՏՊ տվյալների հավաքագրում և վերլուծություն (ITARDA)
- Traffic data utilization. Waze, CDR տվյալներ, ՃՏՊ հավաքագրման հավելված, տվյալների ինտեգրում,

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպումներ և այցեր են եղել Տոկիոյի և Օսակայի երթևեկության կառավարման կենտրոններ, Mitsubishi Heavy Industries Futami Works & ERP2.0, Nagoya Electric Industry, Canon Customer Experience Center Tokyo Nippon Signal գործարաններ: Ներկայացրել եմ շնորհանդես ՀՀ ընդհանուր օգտագործման ճանապարհներին առկա խնդիրների մասին, որոնց հնարավոր կլինի լուծում տալ խելացի տրանսպորտային համակարգերի ներդրման շնորհիվ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.


Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա շարունակական համագործակցության վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքների շնորհիվ կազմել և ներկայացրել եմ գործողությունների պլան՝ ՀՀ ճանապարհներին խելացի տրանսպորտային համակարգեր ներդնելու նպատակով (կցվում է): Ընտրել եմ երկու հիմնական ուղղություններ՝ ձմեռային պայմաններում առավելագույն արագության կառավարում, համապատասխան

տեղեկատվության տրամադրում, իսկ խոշոր քաղաքների խցանումները կրճատելու նպատակով առաջարկել եմ խաչմերուկներում ներդնել ադապտիվային կառավարում: Կազմակերպիչների կողմից ընդգծվել է գործողությունների պլանի ներկայացումը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ հետագա համագործակցության համար: Ճապոնիայի կողմը պատրաստակամություն է հայտնել խորհրդատվական և տեխնիկական աջակցության համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:



16.12.2025թ.